



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ**

**ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԻ
ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ**

(ութամսյա)

Մարզի տնտեսության զարգացման հիմնական ուղղությունը գյուղա-տնտեսությունն է, որտեղից տարեկան միջին հաշվով արտադրվում է 21-22 միլիարդ դրամի համախառն արտադրանք: Մեկ շնչի հաշվով արտադրվում է 429 հազ. դրամի արտադրանք: Ընթացիկ տարին գյուղատնտեսության համար եղել է աննպաստ, կապված ձմռան ամիսներին խաղողի ու պտղատու այգիների ցրտահարության /40-45 տոկոս/, ինչպես նաև աննախադեպ երաշտի պատճառով: /Վեգետացիայի ընթացքում մթնոլորտային տեղումները կազմել են ընդամենը 87 մմ, որը նորմայից պակաս է երկու անգամ/: Մարզում հացահատիկային մշակաբույսերը գլխավորապես մշակվում են անջրդի հողակտորների վրա: Այդ է հիմնական պատճառը, որ հեկտարի միջին բերքատվությունը կազմել է 13 ցենտներ:

Մեր հաշվարկներով մեկ հեկտար հացահատիկի ցանքից մինչև բերքահավաքը կատարվում է 130-140 հազար դրամի ծախս: Հեկտարից 13-15 ցենտներ բերքի պայմաններում գյուղացիները գրեթե եկամուտ չեն ստանում: Այդ է հիմնական պատճառը, որ մարզում ունեցած 13.0 հազ. հեկտար անջրդի վարելահողերից ամեն տարի ցանքի տակ է դրվում 2000-2500 հեկտար: Նույն պատճառաբանությամբ 2017թվականին նախորդ տարվա համեմատությամբ 1680 հա պակաս ցանք է կատարվել: Ավելացնենք նաև, որ մարզի վարելահողերը գտնվում են մեծ թեքությունների վրա, կտրտված են, ունեն ցածր բնական բերրիություն: Վտանգի տակ է նաև ընթացիկ տարվա աշնանացանի կատարումը, քանի որ երկարատև տեղումների բացակայության պատճառով, հնարավոր չէ հողերը վարել ու ցանք կատարել:

Մարզում ոռոգելի հողատարածությունների ավելացման միակ հնարավորությունը փոքր ջրամբարների կառուցումն է: Վարչապետի հանձնարարությամբ ՀՀ էներգետիկ ենթակառուցների և բնական պաշարների նախարարության, ջրային տնտեսության պետական կոմիտեի ղեկավարության հետ քննարկվել է մարզում չորս /Ելփին, Խաչիկ, Վերնաշեն, Խնձորուտ/ փոքր ջրամբարների կառուցման հնարավորությունները տրվել տնտեսական և ֆինանսական գնահատականներ:

հհ	Համայնքի անվանումը	Ջրամբարի ծավալը մլ.խմ	Ոռոգվող Հողեր հա	Գումարը մլն. դրամ	1խմ կուտակումը ԱՄՆ դոլարով
1.	Վերնաշեն	3.5	800	2.7	1.6
2.	Խաչիկ	0.55	312	1.13	2.4
3.	Ելփին	0.8	400	1.5	3.5

Մարզում հնարավոր է 1131 հեկտարով ավելացնել ոռոգելի հողեր, եթե կառուցվի 56.2 կմ ոռոգման ջրագիծ և 11.0 կմ ներքին ցանց /կցվում է ցուցակը՝ ըստ համայնքների/:

2017թվականի օգոստոսի 18-ին մարզային խորհրդի նիստում ֆերմերների մասնակցությամբ քննարկվեց գյուղատնտեսական նշանակության հողերն առավել արդյունավետ օգտագործելու, կաթիլային համակարգերի ներդրման, նորագույն տեխնոլոգիաներով հագեցված ինտենսիվ այգիների հիմնամ, գյուղատնտեսական ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների մասնակի սուբսիդավորման, գյուղատնտեսական հումքի մթերումների նպատակով ազրո վերամշակման ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների, ինչպես նաև կարկտապաշտպան ցանցերի ներդրման նպատակով պետական աջակցության ծրագրերի մասին հարցեր: Այսօր մարզում 40հա վրա իրականացվում է կաթիլային ոռոգում: Այս ուղղությամբ ֆերմերային տնտեսությունների հետաքրքրությունը մեծացել է:

2017թվականի սեպտեմբերի դրությամբ ֆինանսական վարձակալության լիզինգի պետական աջակցության ծրագրի շրջանակներում Թառաթումբ համայնքի շահառուների կողմից ձեռք է բերվել մեկ միավոր գյուղատնտեսական տեխնիկա /,,Բելոռուս../ կցվող գործիքներով/:

Կառավարության կողմից հաստատված գյուղտնտեսության ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման ծրագրից օգտվելու համար ներկայացվել է 140 հայտ, որոնք հիմնականում վերաբերվում են անասնապահական ճյուղի զարգացմանը, նոր տեխնոլոգիաներով ինտենսիվ այգիների հիմնելուն, հումքի վերամշակմանը: Գյուղատնտեսական արտադրությունը խթանելու նպատակով, կազմվել ու ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն է ներկայացվել այծաբուծության զարգացման, թռչնաբուծության զարգացման, ջերմոցային տնտեսությունների ստեղծման, թռչնաբուծության զարգացման, չրերի արտադրություն կազմակերպելու ներդրումային ծրագրեր: Ընդհանուր առմամբ ներկայացվել է 23 ներդրումային ծրագրեր 2 միլիարդ 518 մլն. դրամ գումարով, որոնցից 8-ը՝ 1 միլիարդ 616 մլն դրամ գումարով հավանության է արժանացել կառավարության կողմից, դրանցից երկուսը՝ չրերի արտադրության և այծի կաթից պանրի արտադրության ծրագրերն 120 մլն. դրամով արդեն ֆինանսավորվել են:

Բնակչության զբաղվածության խնդիրների լուծման գործում կարևոր նշանակություն ունի ,,Ամուլսարի,, ոսկու հանքավայրի շահագործումը: Նշված հանքավայրի շահագործման համար 2017-2018թթ կներդրվի 370 միլ. ԱՄՆ դոլար: Արդեն իրականացվել է 156.6միլ. ԱՄՆ դոլարի աշխատանքներ: Հանքավայրում այսօր աշխատում են 1453 մարդ, որոնցից 777-ը մարզից են:

Մարզի համայնքների առաջնահերթ լուծում պահանջվող հրատապ ծրագրի շրջանակում ՀՀ պետական բյուջեից 2017թվականին հատկացվել է 320 միլ. դրամ:

Այս միջոցներն ուղղվել են մարզի 29 համայնքներում առավել հրատապ խնդիրների լուծմանը: Շինարարական աշխատանքներն արդեն ավարտվել են: Նշված ծրագրերից են նախադպրոցական շենքերի, մշակույթի տների, խմելու և ոռոգման ջրագծերի նորոգման աշխատանքները: Ջերմուկ քաղաքի ներքաղաքային փողոցների, բնակելի շենքերի տանիքների ու բակային տարածքների, քաղաքային զբոսայգու բարեկարգման համար պետական բյուջեից հատկացվել է 1190 միլ. դրամ:

2017թվականի ութ ամիսների ընթացքում համայնքային բյուջեների ֆինանսավորմամբ կատարվել է 136.6 միլ. դրամի շինարարական, վերանորոգման աշխատանքները, որը նախորդ տարվանից ավել է 13.0 միլ. դրամով:

Բարեգործական կազմակերպությունների ֆինանսավորմամբ իրականացվել է 158.6 միլ. դրամի շինարարական աշխատանքներ /փողոցների լուսավորություն, խմելու ջրագծերի կառուցում/:

Մասնավոր ներդրողների ֆինանսավորմամբ իրականացվել է 816.7 միլ. դրամի շինարարական աշխատանքներ /հյուրանոցների, հանգստյան գոտիների, ՀԷԿ-ի կառուցում/:

Հայաստանի տնտեսական զարգացման հիմնադրամի ֆինանսավորմամբ սկսվել է Եղեգնաձորի թիվ 1 դպրոցի շինարարությունը՝ գումարով 1100 միլ. դրամ:

„Թուֆեկյան,, ընկերությունը ծրագրավորում է Արենի գյուղում կառուցել հյուրանոցային համալիր և գինու գործարան, որի համար նախատեսվում է կատարել 4.2 միլիարդ դրամի ներդրում և մոտ 2.5 միլիարդ դրամի արժողությամբ ընթացիկ ծախսեր շինարարության ավարտից հետո առաջիկա հինգ տարիների ընթացքում:

Ընդհանուր առմամբ կատարվելու է 6.7 միլիարդ դրամի ներդրում: Կատեղծվի 190 աշխատատեղ: „Թուֆեկյան,, ընկերությանը ներդրումա-յին ծրագրին աջակցելու նպատակով, ՀՀ կառավարությունից ակնկալում է 537.5 միլիոն դրամի ներդրում /գազիֆիկացման, էլեկտրաէներգիայի մատակարարման, ճանապարհների բարեկարգման, կոյուղագծի կառուցման, ջրի մաքրման/ հարցերը լուծելու համար:

Մեր կարծիքով սա կարող է լինել պետություն-մասնավոր հատվածի համագործակցության լավագույն օրինակ:

Ընդհանուր առմամբ մարզում 2017թվականին ստեղծվել է 1850 աշխատատեղ: Վերը նշված օբյեկտների շինարարական աշխատանքների ավարտից հետո, կստեղծվի 884 մշտական աշխատատեղ:

Վարչապետի հանձնարարությամբ խոշորացված համայնքների ղեկավարների հետ քննարկվել է միջհամայնքային ճանապարհների սպասարկման և վերանորոգման հետ կապված հարցեր:

Գույքագրվել է վերանորոգման ենթակա ճանապարհները, և ըստ առաջնահերթությունների ու ֆինանսական գնահատականների ներկայացվել է ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարություն:

„Մաքուր Հայաստան ծրագրի շրջանակներում մայիսի 27-ին և հուլիսի 29-ին կայացած համապետական շաբաթօրյակի ընթացքում մարզում իրականացվել են ծավալուն աշխատանքներ: Այդ ընթացքում արձանագրված 129 աղբավայրերից 112-ը փակվել են: Չորս աղբավայրերի /Մալիշկա, Քարագլուխ, Վերնաշեն, Սալի/ ամբողջությամբ փակելու համար հաշվարկներ են ներկայացվել գումարային տեսքով: ՀՀ կառավարության 2017 թվականի օգոստոսի 24-ի թիվ 1070-Ն որոշմամբ, նշված աղբավայրերի փակում ծրագրի նախագծահետազոտական աշխատանքների համար հատկացվել է 210 հազ դրամ: Նախապատրաստական աշխատանքներ են տարվել հոկտեմբերի 21-ի համապետական շաբաթօրյակը նույնպես կազմակերպված անցկացնելու համար:

Վերանայվել են մարզի համայնքներում աղբահանության սակագների հաշվարկման մեխանիզմները, գյուղական համայնքներում սահմանվել է աղբահանության սակագնի մեկ միասնական շեմ: Աղբահանության համար համայնքապետարանի կողմից բնակչության հետ կնքվել են 5661, իսկ իրավաբանական անձանց և տնտեսվարող սուբյեկտների հետ 526 պայմանագիր: Պայմանագրերի կնքման աշխատանքները շարունակվում են: 2017 թվականի ութ ամիսների տվյալներով ֆիզիկական անձանցից աղբահանության դիմաց վարձավճարների հավաքագրումը կազմել է 67.4 տոկոս:

Ավելացնենք նաև, որ համայնքների ղեկավարների և հարկային մարմինների հետ ճշգրտվել է իրավաբանական անձանց և տնտեսվարող սուբյեկտների իրական թիվը: Պարզվել է, որ մարզում իրավաբանական անձանց և տնտեսվարող սուբյեկտների թիվը ոչ թե 1840 է, այլ 896:

Վարչապետի հանձնարարությամբ աղբահանության և սանմաքրման ծախսերի վերլուծության արդյունքներով հստակ ծրագիր է ձևավորվել ու ուղարկվել համայնքներին անվերապահորեն կատարելու համար:

Զբոսաշրջությունը մարզի տնտեսության առավել դինամիկ զարգացող ոլորտներից է, և հայտարարված է տնտեսության գերակա ճյուղ: Մարզի տարածքում հաշվառված են ավելի քան 1300 պատմամշակութային հուշարձաններ: Բազմաթիվ պատմամշակութային և ճարտարապետական հուշարձանների, բնական տեսարժան վայրերի առկայությունը, բուսական ու կենդանական աշխարհի բազմազանությունը, էկոլոգիապես մաքուր գյուղատնտեսական մթերքների արտադրությունը, Ջերմուկի հանքային ջրերի ճանաչելիությունը, մարզը դարձրել են զբոսաշրջության համար գրավիչ տարվա չորս եղանակների համար: Զբոսաշրջության բնագավառում վերջին տարիներին արձանագրվել է քանակական ու որակական աճ:

2016 թվականի ընթացքում զբոսաշրջիկների թիվը հասել է 42 հազարի, իսկ այս տարվա ութ ամիսներին այդ թիվը հասնում է 28200-ի, նախորդ տարվա 24500 դիմաց:

Զգալիորեն զարգացել են ենթակառուցվածքները, բարձրացվել է մատուցվող ծառայությունների որակը:

Ջերմուկ քաղաքի զարգացման ծրագրերի իրականացումը նոր խթան կհանդիսանա զբոսաշրջության զարգացման համար:

Մարզում գործում են 17 հույրանոցներ, 68 հյուրատներ, և 8 առողջ-արաններ:

Առողջապահության ոլորտում 2017թվականի ութ ամիսների տվյալներով բյուջեի նկատմամբ վճարովի ծառայությունների գումարը կազմել է 29 միլ. դրամ, որը նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատությամբ ավել է 7 տոկոսով: Ինտենսիվ աշխատանքներ են տարվում նշված գումարի ծավալի ավելացման և առկա թերությունների վերացման ուղղությամբ:

Համաձայն Վարչապետի հանձնարարականի հստակ աշխատանքներ են կատարվել համայնքների սեփական եկամուտների հավաքագրման ուղղությամբ, ինչը այս փուլում արձանագրված արդյունքներով կատարվել է 103.2 տոկոսով: Սեփական եկամուտներն նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատությամբ ավելացել են 106.9 միլ. դրամով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏ

Հ. ՍԱՐԳՍՅԱՆ

